

Ընդհանուր տեղեկություններ

Նախագիծը մշակված է Երեվան քաղաքի՝ կենդանաբանական այգու կարանտինի

ներքին էլեկտրականության ցանցերի մոնտաժային աշխատանքների համար՝ համաձայն ճարտարապետա-շինարարական լուծումների, բոլոր տեխնիկական առաջադրանքների, պատվիրատուի կողմից տրված առաջադրանքների, և էլեկտրոտեխնիկական կանոնակարգի, NEC (National Electrical Code), ՇՊ 31-110-2007 ՇՈՒՊ 67-78-ի հիման վրա:

Նախագծում ընգրկված են՝

1. Ընդհանուր տեղեկությունները:
2. Օգտագործված պայմանական նշանների ցանկը:
3. Էլ. վարդակների, լուսատուների միացման սխեմաները:
4. Խմբային վահանակների ավտոմատ անջատիչների հասցեավորման աղյուսակները:
5. Օգտագործվող էլ. նյութերի մասնագիրը:
6. Խնտերնետի, տեսախցիկների, Ֆանկոյլների և Վիրահատական աթոռների միացման սխեմա ները:

Ելնելով էլեկտրական բեռնվածքի հաշվարկի համար տրված տվյալներից՝ սնուցող էլ.վահանակների դրվածքային հզորությունը հեռանկարում կկազմի եռաֆազ 20 կՎտ: Էլեկտրաէներգիայի բաշխումը կատարվում է խմբային էլ. վահանակների (LP) արկղերից, խմբային էլ. վահանակի մեջ տեղադրվում են միաբևեռ, եռաբևեռ ավտոմատ անջատիչները, իողանցման և զրոյական կոնտուրները:

Խմբային ցանցերը կառուցվում են պղնձե բազմաջիղ մալուխներով և հաղորդալարերով : Ներքին վարդակային ցանցերը կառուցել 3x4.0մմ, կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. մալուխների միջոցով:

Ներքին լուսավորության ցանցերը կառուցել 3x1.5մմ, կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. հաղորդալարերի միջոցով:
Սխմուլացիոն կենտրոնին սնող մալուխը անցկացնել հատկում գտնվող բաշխիչ վահանից

Վարդակները, խնտերնետի և հեռուստացույցի Վարդակները, տեղադրել հատակից 300մմ, անջատիչները տեղադրել հատակից 850մմ բարձրության վրա:

Խմբային էլ. վահանակը տեղադրել հատակից 1500մմ բարձրության վրա:

Որպես պաշտպանիչ միջոցներ հարկավոր է միացնել գործող հողանցման ցանցին:

Վիրահատական աթոռներին սնող մալուխը անցկացնել գետնի տակով, պլաստմասե խողովակի մեջ: